



Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

ՀՈՒՅՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԸ ՀԱՅ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԱՄՓԻԼՈՔՈՍ ԻՎՈՆԱՑԻ

Հայրաքանական գրականության ոչ անհայտ դեմքերից է Դ դարի հույն մատենագիր, Լիկաոնիայի միտրոպոլիտ և Իկոնիա քաղաքի եպիսկոպոս Ամփիլոքոսը: Ծնվել է հավանաբար 345 թվականին և մահացել՝ շուրջ 399-ին: Ամփիլոքոս Իկոնացին իր հեղինակավոր մասնակցությունն է բերել 381, 385, 394 թվականների եկեղեցական ժողովներից և հակաճառական երկերով համար, անտեղիտայի պաշար մղել արիանոսյան գաղափարախոսության դեմ, պաշար, որ նա մղում էր ոչ միայն գրչով, այլև առավել գործնական քայլերով: Այս նպատակով Ամփիլոքոսը դիմում է Թեոդոս կայսերը՝ հունական գավառներից արիանոսյան աղանդին հեռացնելու խնդրանքով: Սակայն, երբ նրա խնդրանքը մնում է անպատասխան, եկեղեցու այդ եռանդուն ու ձեռներեց սպասավորը դիմում է կայսերը համոզելու հետևյալ հրահարքին. Արկադիոսին (Թեոդոսի որդուն)՝ թագածառանգ հայտարարելու կապակցությամբ Ամփիլոքոսը, մյուս եպիսկոպոսների նման ներկայանալով պալատ, հարգանքի տուրք է մատուցում միայն կայսերը՝ անուշադրության մատնելով թագածառանգին: Այս վերաբերմունքից զայրացած՝ Թեոդոս կայսրը հրամայում է Ամփիլոքոսին անմիջապես հեռանալ պալատից: Կատարելով կայսեր հրամանը՝ Իկոնիայի եպիսկոպոսը դիմում է նրան հետևյալ պատգամով. «Տեսանե՛ս արքայ, զի դու ոչ տանիս զանար-

զանս որդոյ քոյ. և զի՛արդ Հայրն երկնստոր տանիցի զարհամարհանս Միածնին փրոյ՝ յերեսաց քրիստոսամարտ հերետիկոսաց ժամանակիս»: Այդ ժամանակ թագավորը «զարմացեալ ընդ իմաստութիւն սրբոյ եպիսկոպոսին՝ արգել ձեռնագրով իրով զհամարձակութիւն արիանոսաց, եւնոմեանց, սաբելեանց, մակեդոնեանց և սպորդիւնարիտաց»¹:

Ըստ հայ աղբյուրների Ամփիլոքոս Իկոնացին «էր աշակերտ սրբոյն Բարսղի Կեսարացոյ, և գործակից նորա՝ որպէս և Գրիգորի Աստուածաբանի՝ ի ճգնողական վարս և ի յաղթահարել զհերձուածօղս աստուածաբան վարդապետութեամբ»²: Բարսեղ Կեսարացու և Ամփիլոքոս Իկոնացու մերձավոր հարաբերությունների մասին է վկայում և կանոնական այն թղթի առկայությունն ինքնին, որ առաջինը հղել է երկրորդին, որպէս հեղինակավոր եկեղեցական գործչի: Թուղթս հայ թարգմանական մատենագրության մեջ հայտնի է «Գիր կանոնական մեծի եւ գիտնատրի եպիսկոպոսապետի Բա[ր]սղի առ սուրբն Ամփիլոքոս յիկոնացոց եպիսկոպոս բանս ԾԱ»

¹ Հ. Մ. Ավգերեան, Լիակատար վարք և վկայարանութիւն սրբոց, հո. ԺԲ, Վեներիկ, 1815, էջ 82: Նաև՝ Справочный Энциклопедический Словарь, изд. К. Крайя, т. I, СПб., 1847, ст. 273.

² Հ. Մ. Ավգերեան, նշվ. աշխ., էջ 81—82:

խորագրով: Հայրաբանական մատենագրության մեջ նվազ կարևոր չեն Գրիգոր Աստվածաբանի³ Ամփիլոքոս Իկոնացուն հղած թղթերը, որոնք վկայությունը լինելով ճգնաժամական համատեղ կյանքում այդ երկու հայրերի՝ աղանդավորական շարժումներին ընդդիմակալելու մասին, միաժամանակ գաղափարաբանական մտքի վավերական հուշարձաններ են⁴:

Սակայն ժամանակի եկեղեցական, քաղաքական կյանքին չէ միայն, որ իր նպաստըն է բերել Ամփիլոքոս Իկոնացին: Փոքր չէ նրա վաստակը մատենագրական մարզում եւ: Ամփիլոքոսի հեղինակության մասին է խոսում թեկուզ այն իրողությունը, որ նրա երկերը հաճախ ներկայացվել են մատենագրին ժամանակակից, տիեզերական եկեղեցու քաղաքականական մշակներից Հովհանն Ոսկեբերանի անվամբ⁵:

Ամփիլոքոս Իկոնացին հեղինակ է կրոնա-պատմական և վարդապետական մի շարք երկերի, որոնք կարող են վստահելի սկզբնաղբյուր համարվել Դ դարի դավանաբանական պայքարի պատմության ուսումնասիրման համար⁶:

³ Փղթի հունարեն բնագիրը տե՛ս I. B. Pitra, *L'aris ecclesiastici Graecorum. Historia et monumenta*, t. I, Romae, 1864, p. 576—600, հայ թարգմանությունը՝ Վ. Հակոբյան, *Կանոնագիրք հայոց*, հտ. II, Երևան, 1961, էջ 331—358:

⁴ Փղթի մասին տե՛ս Migne, PG., t. 35, p. 82—91:

⁵ Ամփիլոքոս Իկոնացու մասին մատենագիտական տեղեկություններ տե՛ս Հ. Ս. Անասյան, *Հայկական մատենագիտություն*, հտ. II, Երևան, 1950, էջ 659—693, M. Geerard, *Clavis Patrum Graecorum*, v. II, Ab Athanasio ad Chrysostomum, Brepols—Turnhout, 1974, p. 230—242:

⁶ Տե՛ս Migne, PG., t. 39, col. 65—88, 120—129, PG. t. 61 col. 745—752, 777—782, հտ.՝ Յ. Է. Гранстрем, *Иоанн Златоуст в древней русской и южнославянской письменности (IX—XIV вв.)*—*Вопросы истории русской средневековой литературы*—*Труды отдела древнерусской литературы*, т. XXIX, а., 1974, ст. 188, M. Geerard, pp. 292 (3237), 454 (4524), 547 (4524), 555 (4548), 592 (4640), 596 (4654), 573 (4605), 588—59 (4661), 592 (4677), 606 (4724), 618 (4859): Այս բիցնակ շփոթ առկա է հայ մատենագրության մեջ նմանապես: («Յովհանն Ոսկեբերանի մեկնությունը թղթըն Պաղոսի», հտ. Բ, Վենետիկ, 1862, էջ 867—902) M. Geerard, p. 232 (3238):

⁷ Այս կատակոչությամբ տես հատկապես նրա ժողովական բուրքը՝ Migne, PG. t. 39, col. 93—98:

Հայ թարգմանական մատենագրությունը մեզ է հասցրել նրա՝ Քրիստոսի ծննդյանը նվիրած ներքոյը, որ նուազերում «նկերորդ առուր ծննդեանն Քրիստոսի ասացեալ ներքողեան ի սրբոյն Ամփիլոքայ իկոնիոյ եպիսկոպոսի» («Բազումք են պարզեք շնորհացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, քաջ ինչ լաւագոյն քան զմերձաւոր այս առուր տօնի պարզև... համաձայնեալ տե՛սներեան առհասարակ») վերտառությամբ է հանդիպում: Այս երկը, որքան հայտնի է մեզ, այժմ առկա է միայն հայերեն թարգմանությամբ:

Միայնամբ Ամփիլոքոս Իկոնացուն է վերագրվել հարսել Կեսարացու վարքի մի համատարություն («Վարք երանելոյն հարսրդի Կեսարու... զոր գրեաց Ամփիլոքոս, Յիկոնացոց եպիսկոպոսն», սկ. «Այս մեծ և սրանչեկի այս Աստուծոյ... յառաջ քան զնայ եպիսկոպոսապետ էր»⁷), որն իրապես պատկանում է Ելլադիոս Կեսարացուն⁸:

Ամփիլոքոս Իկոնացին իր արժանի տեղն է գրավել հայ դավանաբանական գրականության մեջ նմանապես: Նրա անվամբ բերված ճառական հատվածները հյուրընկալվել են դավանաբանական այնպիսի ծանրակշիռ երկերում, որպիսիք են Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւն ընդդէմ երկարնակաց», Վարդան Այգեկցու «Գիրք հաստատութեան և Արմատ հատուր» խորագրով աշխատություններն ու դավանաբանական բնույթի ժողովածուներ և թղթեր: Քննությունը պարզում է, որ այդ հատվածներից աղբյուրագիտական արժեք են ներկայացնում հատկապես Ե և Ջ միավորները, որոնց հունարեն բնագիրը անհայտ է: Խնդրո առարկա հատվածները հայ դավանաբանական մատենագրության մեջ են մուտք գործել Կյուրեղ Ալեքսանդրացու Պարսպմանց գրքից, Տիմոթեոս Կուզի Հակաճառությունից, Եփեսոսի ու Քաղկեդոնի ժողովական նյութերից, ինչպես նաև՝ Հովհանն Դամասկացու հակաճառական մի աշխատությունից:

Ատորն ներկայացնում ենք այդ հատվածները՝ հունարեն բնագրի համապատասխան

⁸ Հ. Բ. Սարգիսյան, *Մայր ցուցակ հայերեն նուագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Բ, Վենետիկ, 1924, էջ 1239:

⁹ Վենետիկի Մխիթարյան Մատենադարան, ձև. № 315, էջ 1ա—10բ:

¹⁰ *Acta Sanctorum, Martii*, t. II, Parisiis, 1865, p. 938, Հ. Բ. Սարգիսյան, *Գշվ. աշխ.*, էջ 1270, Հ. Ս. Անասյան, *Գշվ. աշխ.*, էջ 689 նմմտ. M. Geerard, *Գշվ. աշխ.*, p. 241 (3252, 3253):

մասի սկսվածքի և վերջի Աշուտով: Բնագրի, հայերենին համապատասխանող, հատվածներից ամենափոքրը (Դ միավոր) ներկայացնում ենք ամբողջովին:

Ա. Անփիլոքի եպիսկոպոսի յիկոնիոյ, յորմէ յաղագս ըստ մարմնոյ ծննդեանն

«Շմարտութիւն ծանուցաւ, շնորհն եկն՝ երևեցաւ, որ Որդին էր Աստուծոյ՝ յԱստուծոյ Բանն մարմին եղև վասն մեր, զի մահացուս՝ ի կեանս յափտենականս յարուսցէ, և ի մեռելոց ի վեր կանգնեացէ՝ Արարիչն բոլորիցս, որ նախ քան զամենայն արարածս երևելիս և աներևոյթս: Ընդ միայնոյ Հօր և Հոգւոյ գոլով՝ անմահ՝ այսօր ահա մեզ ի Կուսէ ծնեալ, առանց՝ ամենայն մեղաց Աստուծոյ, առանց առն՝»:

«Գիրք պարսպմանց սրբոյն Վիրրի Աղեքսանդրոս Բարսապետի», Վ. Պոլիս, 1717, էջ 210:

Դավանաբանական քաղվածքների ժողովածու, Մաշտոցի անվան Մատենադարան (սլյունիստն՝ ՄԱՄ), ձեռ. № 8191, էջ 84ա—բ:

«Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճատութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի», աշխատութեամբ Կարապետ Ծ. վարդապետի և Երուանդ վարդապետի, Էջմիածին, 1908, էջ 82 տ. 30—38 տ. 2:

Αμφιλοχίῳ επισκόπου /κονίου, ἐκ τοῦ Περὶ τῆς κατὰ σάρκα γεννήσεως.

‘Η ἀλήθεια ἐγνώσθη, ἡ χάρις ἦλθε, καὶ ἡ ζωὴ ἐφάνη. ὁ τοῦ Θεοῦ Υἱὸς ὢν... χωρὶς πάσης ἁμαρτίας, ἄνευ ἀνθρώπου, ἦτος ἀνδρός.

(Cyril. Alek. lib de recta fide, Opp, t. V, part. II, sub fin. p. 50 et concil. Ephes, part. I, t. III, Concilior, p. m. 683) Migne, PG., t. 39, col. 100 B—C.

(Այսուհետև փակագծից դուրս կնշվի Միգի հրատարակության միայն էջերը, իսկ փակագծից ներս՝ համատոտագրված բուն աղբյուրները, որոնք բերված են Միգի մոտ):

Տիմոթեոս Կուզի Հակաճատությունը, ի տարբերություն նախորդ երկու աղբյուրների, հատվածի համար հետևյալ ընթերցվածներն ունի. 1 շնորհն եկն, կեանքն յայտնեցան, 2 Աստուծոյ էլով Որդի, 3 մահկանացուս, 4 ի մեռելոցն կանգնեացէ, 5 էլով, 6 առ, 7 Աստուծոյ, առանց առն փխ թանց մարդոյ կամ եթ՝ առն:

Համեմատությունը ցույց է տալիս, որ տիմոթեոսյան ընթերցումները համեմատա-

բար մոտիկ են հունարեն բնագրին. Տիմոթեոսի Հակաճատության նման հունարենում չիք վերջին տողի «Աստուծոյ» բառը: Հունարենի Տիմոթեոս Կուզի Հակաճատությունը, ի տարբերություն Պարսպմանց գրքի և Դավանաբանական ժողովածուի, հատվածիս համար հետևյալ ընթերցվածներն ունի. 1 շնորհն եկն, կեանքն յայտնեցան, 2 Աստուծոյ էլով Որդի, 3 մահկանացուս, 4 ի մեռելոցն կանգնեացէ, 5 էլով, 6 առ, 7 Աստուծոյ առանց առն փխ թանց մարդոյ կամ եթ՝ առն:

Տիմոթեոս Կուզի Հակաճատությունը, ի տարբերություն Պարսպմանց գրքի և Դավանաբանական ժողովածուի, հատվածիս համար հետևյալ ընթերցվածներն ունի. 1 շնորհն եկն, կեանքն յայտնեցան, 2 Աստուծոյ էլով Որդի, 3 մահկանացուս, 4 ի մեռելոցն կանգնեացէ, 5 էլով, 6 առ, 7 Աստուծոյ առանց առն փխ թանց մարդոյ կամ եթ՝ առն:

Բաղդատումը ցույց է տալիս, որ տիմոթեոսյան ընթերցումները համեմատաբար մոտիկ են հունարեն բնագրին. Հունարենի նման Տիմոթեոսի Հակաճատության մեջ չկա վկայաբերված հատվածի նախավերջին տողի «Աստուծոյ» բառը: Հունարենի հետ են համեմաբարվում, օրինակ, Հակաճատության հետևյալ ընթերցվածները. թանց մարդոյ կամ եթ՝ առն (ἀνευ ἀνθρώπου, ἦτος ἀνδρός), շնորհն եկն, կեանքն յայտնեցան (ἡ χάρις ἦλθε, καὶ ἡ ζωὴ ἐφάνη).

Արդ. Համեմատությունից պարզվում է, որ Դավանաբանական ժողովածուի հատվածը բերված է Պարսպմանց գրքի հայերեն թարգմանությունից, իսկ տիմոթեոսյան հատվածը թխում է ուղղակի հունարեն բնագրից:

Բ. Անփիլոքի եպիսկոպոսի յիկոնացոց

Վասն զի նոյն ինքն թագաւոր է և Աստուած զմահ ըստ տնօրէնութեան չարչարանացն ճաշակեալ ընձաքն խորհրդոցն են նշանակք. Մատուցանեն ոսկի, քանզի ճանաչեն թագաւոր, մատուցանեն կնդրով, քանզի Աստուծոյ գիտացին մատուցանել: Յաւելին զմոտս վասն խորհրդի չարչարանաց մահու:

Վարդան Այգեկցի, «Գիրք հաստատութեան և Արմատ հաստոյ», ՄԱՄ, ձեռ. № № 1982 (էջ 59ա), 3295 (էջ 355ա), 4425 (էջ 175բ), Դավանաբանական քաղ. ժող. ՄԱՄ, ձեռ. № 8191, էջ 214բ, Վեներաբիլի Մխիթարյան Մատենադարան, ձեռ. № 816, էջ 22բ (Հ. Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 1289):

Ἄμφιλοχίου ἐπισκόπου Ἰωνίου

Ἐπιπέδη γὰρ ὁ αἰτός Βασιλεὺς καὶ Θεός, καὶ νεκρωτικῶς διὰ τῆς τοῦ παθούς... Προσφέρουσι φέρουσαν, διὰ τὴν ἐν τῷ μυστηρίῳ τοῦ παθούς νεκρωσίν.

(Concil. Ephes. part. II, act. I, t. III. Concillor. p. 1063. Concil. Chalced. part. II, act. I, t. IV, Concillor. p. 1145). col. 100C.

Հատվածի սկզբածրը մի փոքր այլ է Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ»-ում. «Նոյն ինքն Յուզարի և Աստուած և զկիրս տնօրէնութեան յանձն էառ...»:

Գ. Նորին ի նոյնս

Եթէ ոչ էր Նորա ծննալ մարմնապէս և ոչ դու ծնանէիր հոգեպէս: Եթէ ոչ էր Նորա յանձն առեալ զճառայի կերպարանս և ոչ դու զփառս զորոկարութեան շառէիր: Վասն յերկրի երկնատրն, զի դու յերկինս կեցն երկրատրոյ: Վասն Քրիստոս զինքն ունայնացոյցն, զի մեք ամենեքին ի լրմանէն Նորա առցոյք: Նորայն մահ մեզ ամենեցուն եղև անմահութիւն, Տեսոն չարչարանքն ծառային բարձրութիւն եղև, և դու զերախտիսն առնու ի հաճութեանէ մերեւալս:

ՄԱՄ, ձև. № № 1982 (էջ 55թ), 3295 (էջ 354ա), 4425 (էջ 174բ—175ա), 8191 (էջ 214բ). Վանեակի Միսթ. Մատ., ձև. № 316, էջ 22բ:

Օրօւօք տօ՛ւ սօ՛ւօ

Εἰ μὴ γὰρ ἑκαίνας ἀγαγόνθη σαρκικῶς, οὐκ ἂν εὖ ἀνεγαγόνθη: πνευματικῶς... Εὖ δὲ τὴν εὐεργεσίαν λαμβάνουσ Βλασφημία: ἐφ' ὅσον.

(Concil Chalced. part. II, act. I, t. IV, p. 1145). col. 100D—101A

Դ. Անփիլոքայ կախկոպոսի լիկոնիոյ, զոր զրեաց թուրք

Այսպէս Աստուած և մարդ զՔրիստոս խոստովանիմք, Որդի Աստուծոյ. զՄի և զնոյն յերկուց բնութեանց կրատրական և անկրական, մահկանացու և անմահ:

Յետ սակաւոց. Մի Որդի յերկուց բնութեանց ասեմք. Անաչալելի, անշփոթելի, անբաժանելի, անփոփոխելի:

Փողովածու թղթոց, ՄԱՄ, ձև. № 500, էջ 234ա:

Τὸ ἀγίον Ἄμφιλοχίου ἐπισκόπου Ἰωνίου, ἐκ τῆς πρὸς Σάλακον ἐπιστολῆς.

Οὕτω Θεὸν καὶ ἄνθρωπον τοῦ χριστοῦ ὁμολογῶ, τὸν Ἰὸν τοῦ Θεοῦ, ἕνα Ἰὸν, ὅσο φράσεων,

παύρη: το καὶ σπαθῆς, Θ-αγῆ: το καὶ ἀδύνα-
του.

Kai Met' αὐτοῦ. "ἕνα Ἰὸν ὅσο φράσεων φρασί, ἀπαύρη, ἀσπαθῆ, ἀδύνατου.

(S. Soannem Damascenum, lib. contra Jacobitas, t. I, pp. 423, 424, ed. Paris, 1712). col. 113B.

Հատվածը, որ մի բնկորն է Անփիլոքոս Ի-կոնացու սելեկիացիներին հղած թղթի¹¹, բերված է Հովհան Դամասկացու՝ Հակոբիկյան եկեղեցու դեմ գրած հակաճառական մի երկից: Սակայն հայերեն թարգմանություն մեջ բացակայում է բնագրի վերջին երկու նախադասությունը, որոնցից առաջինն (παύρη... ἀλλ' ἀνθρώπουτος.), ի դեպ, առկա է Դամասկացու այս երկի հրատարակության մեջ, իսկ հատվածն ամբողջովին, երկրորդ նախադասության հետ մեկտեղ մինչև վերջ (... καὶ Βλασφημία, ἐπιπίπτει) վկայված է նրա երկը պարունակող բարյախառնյան հավաքածուի ձեռագրերում¹²:

Ե. Անփիլոսի կախկոպոսի

Արդ հաց պատարագին խմոր խառնուած ոչ ունի, որպէս և ոչ Քրիստոս՝ ապակաւնութիւն:

ՄԱՄ, ձև. № № 1982 (էջ 116ա), 3295 (էջ 371բ), 4425 (էջ 190ա), «Խառնարանական վարդապետութիւնը ի գրոց վարդապետաց», ՄԱՄ, ձև. № 3679, էջ 157ա:

Զ. Անփիլայ կախկոպոսի

Բանն մարմին եղև վասն մեր՝ միշտ անապական առանց ամենայն ապականութեան:

Անանիա Սանահնեցի, «Հակաճառութիւն բնոյն երկարնակաց», ՄԱՄ, ձև. № № 6453 (էջ 48ա), 5618 (էջ 170ա), «Վրայութիւն յաղագս Քրիստոսի ի բանից հարանց եկեղեցականաց», ՄԱՄ, ձև. 4246, էջ 111ա:

Անփիլոքոս Իկոնացու ճառական երկերից բերված այս հատվածը, որ նախորդի նման այժմ բացակայում է հունարեն բնագրով, հայ դավանարանական մատենագրության մեջ է ներմուծվել հայկաճառար Անանիա Սանահնեցու (ԺԱ դ.) Հակաճառության միջոցով:

¹¹ Թղթից բերված համապատասխան հատվածների մասին տես F. Cavallera, Les fragments de saint Amphiloque dans l'Rhodogés, «Revue d'histoire ecclésiastique», № 8, 1907, p. 488—491, հղումն րա՝ M. Geerard, էջվ. աշխ., p. 238.

¹² St'a Migne, PG., t. 39, col. 114, annot. 17.